

## Ռորերտ Միերյան

*ՀՀ գլխավոր դատախազության սահմանադրական կարգի հիմունքների, պետության և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազ, Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի հայցորդ*

## ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԷՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԲԵՐԵԼԻ ԱՌԱՆՁԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԱՐԳՎՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ<sup>1</sup>

### Համառոտագիր

Սույն աշխատանքն ուսումնասիրում է համագործակցության վարույթի՝ որպես պարզեցված դատավարական ձևի վերաբերյալ որոշ հիմնախնդիրներ, ներկայացվում է դրա հասկացությունը և դրանում գործածված տերմինաբանությունը:

Նշված ինստիտուտը ներպետական իրավական համակարգում դեռևս համեմատաբար նոր է մտել կիրառական դաշտ, ինչը նշանակում է, որ գործնական աշխատանքում առաջացել և առաջանալու են մի շարք խնդիրներ, որոնց մի մասի առաջանցիկ քննարկումը վստահաբար կարող է նպաստել դրանց առավել ճշգրիտ լուծումների որոնմանը և այդ լուծումների կիրառմանը, ինչով պայմանավորված է նաև աշխատանքի արդիականությունը: Աշխատանքով խնդիր է դրված վեր հանել համագործակցության վարույթի կիրառման շրջանակներում հնարավոր առաջացող խնդիրները, քննարկել դրանց իրավական կարգավորումները, վեր հանել խնդրահարույց և արդյունավետ կողմերը, և որպես աշխատանքի նպատակ՝ առաջարկել դրանց համար որոշակի լուծումներ:

Քննարկման առարկա են դարձվել համագործակցության սահմանների, մեղադրյալի միջնորդության, հսկող դատախազի կողմից դրա վերաբերյալ կայացվող որոշման, քննիչի կարծիքի, «չհաջողված» համագործակցության, միջնորդությունն անմիջապես դատախազին ներկայացնելու, ինչպես նաև մեղադրյալի իրեն վերագրվող արարքում մեղքն ընդունելու վերաբերյալ հստակ արտահայտված դիրքորոշման բացակայության պայմաններում բանակցությունների արդյունքում համագործակցության համաձայնագրի կնքման հնարավորության վերաբերյալ հարցերը, դրանց վերաբերյալ ներկայացվել են առաջարկներ: Քննարկվել են նաև այն իրավիճակները, երբ փաստաթղթային առումով մեղադրյալ չհանդիսացող ան-

<sup>1</sup> Հոդվածը ներկայացվել է 31.01.2024 թ., գրախոսվել է 17.05.2024 թ.:

ձը, ըստ էության, համագործակցում է նախաքննական մարմինների հետ՝ տեղեկացված չլինելով, որ իր իրազեկության ներքո գտնվող տեղեկատվությունը կարող էր դառնալ համագործակցության վարույթի առարկա:

Մատնանշված հարցերի վերաբերյալ աշխատանքում կատարված նկատառումները կարող են էլ ավելի լավարկել գործող իրավակարգավորումները՝ ի նպաստ վարույթի մասնավոր և հանրային մասնակիցների:

**Հիմնաբառեր** - համագործակցության վարույթ, համաձայնագիր, դատախազ, մեղադրյալ, գործարք, համագործակցության առարկա:

### **Ներածություն**

ՀՀ քրեական դատավարության օրենսդրական վերջին շրջափուլի զարգացումների բերմամբ, ի թիվս այլ պարզեցված դատավարական ձևերի, ներդրվեց համագործակցության վարույթի ինստիտուտը: Նշված ինստիտուտը ներպետական իրավական համակարգում դեռևս համեմատաբար նոր է մտել կիրառական դաշտ, ինչը նշանակում է, որ գործնական աշխատանքում առաջացել և առաջանալու են մի շարք խնդիրներ, որոնց մի մասի առաջանցիկ քննարկումը, վստահաբար, կարող է նպաստել դրանց առավել ճշգրիտ լուծումների որոնմանը և այդ լուծումների կիրառմանը, ինչով պայմանավորված է նաև աշխատանքի արդիականությունը:

Աշխատանքով խնդիր է դրված վեր հանել համագործակցության վարույթի կիրառման շրջանակներում հնարավոր առաջացող խնդիրները, քննարկել դրանց իրավական կարգավորումները, վեր հանել խնդրահարույց և արդյունավետ կողմերը, և որպես աշխատանքի նպատակ՝ առաջարկել դրանց համար որոշակի լուծումներ:

### **«Համագործակցության վարույթը»՝ որպես ինստիտուտ և հասկացություն**

Համագործակցության վարույթը, որն իրավական ծագումնաբանության առումով սկզբնավորվել է անգլոսաքսոնական իրավական համակարգից, տվյալ իրավական համակարգում ունի առավել երկարաժամկետ կիրառություն, քան հետխորհրդային պետություններում: Հիշյալ ինստիտուտը, որը, մասնավորապես Միացյալ Նահանգներում առավել հայտնի է որպես «Plea bargain», և իր էությամբ ասոցացվում է մեղքի ընդունման գաղափարի հետ, քրեական գործերի հանգուցալուծման առումով վերջին տարիներին համարվում է գրեթե միակ գործիքը՝ ունենալով շուրջ 98 % կիրառություն<sup>2</sup>: Բացի այդ, ամերիկյան վիճակագրությունը վկայում է, որ նրանք, ովքեր հրաժարվում են պարզեցված դատավարական ընթացակարգով գործի քննությունից և նախընտրում են իրենց գործի

<sup>2</sup> <https://www.americanbar.org/news/abanews/aba-news-archives/2023/02/plea-bargain-task-force/>

քննության ընդհանուր կարգով իրականացումը, դատապարտվում են առավել խիստ պատիժների և պատժաչափերի, քան համագործակցության վարույթի կիրառման դեպքերում<sup>3</sup>:

Վերը նշվածի համատեքստում կարելի է պնդել, որ անգլոսաքսոնական իրավական համակարգը և հասարակությունը եկել են այն գիտակցմանը, որ կարող է և պետք է խրախուսվի և ենթարկվի առավել մեղմ պատասխանատվության այն հանցագործը, որը ոչ միայն ընդունել է մեղքը, գղջացել կատարած արարքի համար, այլև համագործակցել է իրավապահ մարմինների հետ և բացահայտել իր բնույթով համաչափ կամ առավել վտանգ ներկայացնող մեկ այլ հանցագործի կամ հանցավոր խմբի: Այլ խոսքով՝ հասարակությունը համաձայնել է, որ այս չարիքների դեմ պայքարելու համար կարելի է գնալ սոցիալական պաշտպանության ավանդական միջոցներից որոշ զիջումների, որոնցից ամենակարևորն այն է, որ ոչ բոլոր հանցագործները պետք է ենթարկվեն համարժեք պատասխանատվության: Սա, ինչ խոսք, դատավարական հայեցողության լուրջ հնարավորություններ և միաժամանակ պատասխանատվություն է ստեղծում հենց դատախազության համար, որը և քրեական դատավարությունում մարմնավորում է համընդհանուր տուժող հասարակությունը: Դատախազն է, որ պետք է ապահովի այնպիսի պատիժ, որն իրոք կհամապատասխանի արդարացի հատուցման մասին՝ հասարակության, ողջամիտ դիտորդի պատկերացումներին և հասարակությանը այդպիսով կհաշտեցնի հանցագործի հետ<sup>4</sup>:

Համագործակցության վարույթի ինստիտուտը ՀՀ քրեադատավարական համակարգ ներդրվել է 2021 թվականի կեսերին և, ի հեճուկս վերը նշված՝ ամերիկյան ցուցանիշի, իր կիրառման առումով դեռևս, մեղմ ասած, աչքի չի ընկնում: Պատճառները բազմաթիվ են՝ սկսած դրա նոր լինելու և կիրառման առումով դեռևս պրակտիկա ձևավորված չլինելու հանգամանքից, վերջացրած դրա կիրառման իրավական մշակույթի, հանցանք կատարած անձանց՝ իրավապահ մարմինների հետ ոչ այնքան հաճախ համագործակցելու ավանդույթների բացակայությամբ: Միևնույն ժամանակ, արձանագրման է ենթակա, որ ՀՀ իրավական համակարգում առավել լայն կիրառություն ունեն պարզեցված մյուս դատավարական ձևերից համաձայնեցման և արագացված վարույթները:

Համագործակցության վարույթի տեսական և կիրառական հիմնախնդիրներին նախքան անդրադառնալը օբյեկտիվորեն անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել բուն եզրույթի՝ «Համագործակցության վարույթի»՝ որպես հասկացության վերաբերյալ հիմնահարցերը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 13-րդ բաժնում տեղ գտած առանձին տեսակի վարույթների կամ որ նույնն է՝ պարզեցված դատավարական

<sup>3</sup> <https://bja.ojp.gov/sites/g/files/xyckuh186/files/media/document/pleabargainingresearchsummary.pdf>  
<sup>4</sup> Խաչատրյան Դ., Համագործակցության վարույթ. իրավափիլիսոփայական հիմքերը, կիրառման շրջանակներն ու կարգը, արդյունավետության երաշխիքները և զարգացման հեռանկարները, Երևան, «Պետություն և իրավունք», № 2 (64), 2014 թ., էջ 69:

ձևերի շարքում իր ուրույն տեղն է զբաղեցնում համագործակցության վարույթը: Դատավարական ձևի պարզեցումն ինչպես հանցագործություններին առավել արագ և օպերատիվ արձագանքելու, այնպես էլ առավելագույն տնտեսման պայմաններում գործերն արագ և արդյունավետ քննելու և լուծելու նպատակ է հետապնդում<sup>5</sup>:

Ինչպես նշված բաժնի մյուս վարույթները, այնպես էլ քննարկման առարկա հանդիսացող համագործակցության վարույթը միտված են դատավարական ձևի պարզեցմանը, հանրային իրավական ռեսուրսների խնայողական՝ օպտիմալ կառավարմանը և բաշխմանը, օպերատիվ և միևնույն ժամանակ պատշաճ իրավական ընթացակարգերի շրջանակներում նախաձեռնված քրեական վարույթների շրջանակներում հանցագործությունների բացահայտմանը և քրեադատավարական վերջնական պատասխի՝ արդարադատության իրականացմանն ու արդարության վերականգնմանը: Համագործակցության վարույթի նպատակը ոչ թե պարզապես ավելի ծանր հանցագործությունը բացահայտելն ու մեղավորներին քրեական պատասխանատվության ենթարկելն է, այլ, ի վերջո, համարժեք պատասխան տալը հանցավոր դրսևորումները ծնող փոքր թե մեծ համակարգին<sup>6</sup>:

«Համագործակցության վարույթ» եզրույթն ինքնին հենց բնորոշում է այդ ինստիտուտի էությունը: Նշված ինստիտուտի գործարկման առաջնային պայմանը քրեական վարույթի շրջանակներում արդեն իսկ մեղադրյալի դատավարական կարգավիճակ ունեցող անձի նախաձեռնողականությունն է՝ մինչդատական համաձայնագիր կնքելու մասին գրավոր միջնորդություն կամ համագործակցության միջնորդություն (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 465-րդ հոդվածի 2-րդ մաս) ներկայացնելու ձևով: Նշված տերմինաբանությունը (համագործակցություն, համաձայնագիր) իրավագիտության մեջ մեծապես կիրառվում է մասնավոր իրավունքի ոլորտում և առաջին հայացքից խորթ է թվում հանրային, առավել ևս՝ քրեադատավարական հարաբերությունների տիրույթում:

«Համագործակցություն» հասկացությունն ընկալվում է որպես կողմերի՝ որևէ հարցի կամ հարցերի շրջանակի շուրջ իրավունքների, պարտականությունների փոխադարձ սահմանմամբ, դրանից բխող պատասխանատվության որոշմամբ ձեռք բերված համաձայնություն, գործարք, ինչի արդյունքում «կնքվում է համաձայնագիր» կամ ինչի արդյունքներն արտացոլվում են «համաձայնագրում»: Հետևապես, որպես ընթացքի և արդյունքի հարաբերակցություն՝ համագործակցության արդյունքում «կնքվում է» համաձայնագիր: Տեսական գրականությունում մի շարք դատավարագետներ են այս ինստիտուտը դիտարկում որպես գործարք: Օրինակ՝ Վ. Բիկովի դիրքորոշման համաձայն՝ համագործակցության

<sup>5</sup> Ղուկասյան Հ., Մելքոնյան Դ., Տարբերակված դատավարության ձևը և դրա առանձնահատկությունները, Երևան, «Պետություն և իրավունք», № 1, 2007 թ., էջեր 33-34:

<sup>6</sup> Խաչատրյան Դ., Համագործակցության վարույթ. իրավափիլիսոփայական հիմքերը, կիրառման շրջանակներն ու կարգը, արդյունավետության երաշխիքները և զարգացման հեռանկարները, Երևան, «Պետություն և իրավունք», № 2 (64), 2014 թ., էջ 69:

վերաբերյալ համաձայնագրի կիրառմամբ գործի քննության հատուկ կարգը «արդարադատության հետ գործարքի» է նման<sup>7</sup>:

Վերը նշված ընդհանուր մեկնաբանության պրիզմայում դիտարկելով քրեադատավարական «համագործակցության» հասկացությունը և դրանում ներառելով այդ ինստիտուտի առանձնահատկությունները՝ պետք է փաստել, որ մինչդասական համագործակցությունը քրեադատավարական կողմերի՝ վարույթի հանրային և մասնավոր մասնակիցներից հսկող դատախազի և մեղադրյալի (պաշտպանի պարտադիր մասնակցությամբ)՝ իրավական հենք ունեցող և այդպիսի հետևանքներ առաջացնող «գործարքն է»: Դրա մեկնարկի հնարավորությունը տրվում է անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու պահից մինչև նախաքննության ավարտի մասին հայտարարելը վարույթն իրականացնող մարմնին՝ քննիչին՝ հսկող դատախազին հանձնելու նպատակով միջնորդություն ներկայացնելով, որում պետք է նշվի, թե ինչում է դրսևորվելու մեղադրյալի համագործակցության բնույթը, միջին, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության բացահայտման կամ այն կատարած անձի պատասխանատվության ապահովմանն աջակցելու նպատակով իրականացվելիք գործողությունները: Նշված միջնորդությունը դրա բավարարման կամ մերժման վերաբերյալ իր գրավոր կարծիքով քննիչը եռօրյա ժամկետում հանձնում է հսկող դատախազին:

### **Բանակցությունները համագործակցության վարույթում**

Քրեադատավարական համագործակցության էական առանձնահատկություններից է համագործակցության առարկայի շուրջ կողմերի «բանակցությունների» նախնական-միջնորդավորված ձևը միջնորդության գրավոր քննարկումը հսկող դատախազի կողմից, և միայն միջնորդության բավարարման դեպքում կողմերը ստորագրում են հսկող դատախազի՝ մեղադրյալի և պաշտպանի մասնակցությամբ կազմված համագործակցության համաձայնագիրը, որում, ի թիվս այլնի, պետք է տեղ գտնի համագործակցության բնույթը և այն գործողությունները, որոնք մեղադրյալը պարտավորվում է կատարել համագործակցության նպատակին հասնելու համար:

«Բանակցությունների» միջնորդավորված բնույթն արդարացիորեն կոչված է ընդգծելու համագործակցության վարույթի մեկնարկային փուլում վարույթի հանրային մասնակցի՝ հսկող դատախազի վճռորոշ դերը և խոսքը այն առումով, որ նշված փուլում փաստացիորեն հսկող դատախազը ոչ միայն իրավասու է, այլ նաև կրում է ուղիղ պարտականություն՝ գնահատելու ներկայացված միջնորդության՝ նշված վարույթի էությանը համապատասխանելու տեսանկյունից հիմնավորվածությունը:

Փաստացի, նշված վարույթի մեկնարկային փուլում պաշտպանության կող-

<sup>7</sup> Быков В. М., Новый закон о сделке обвиняемого с правосудием: критические заметки. Российский судья. 2009. N 9. . с 5.

մը պարտավոր է «խաղալ» բաց՝ մինչդասական համաձայնագիր կնքելու մասին գրավոր միջնորդությամբ պարտադիր նշելով, թե ինչում է արտահայտվելու իր համագործակցության բնույթը, ինչպես նաև այն գործողությունները, որոնք ինքը պարտավորվում է կատարել, կամ տեղեկությունները, որոնք պատրաստվում է հայտնել՝ հանցագործության բացահայտմանը կամ այն կատարած անձի պատասխանատվության անխուսափելիությունն ապահովելուն աջակցելու նպատակով (ՀՀ քր. դատ. 466-րդ հոդվածի 3-րդ մաս):

Հանրային մեղադրողի՝ որպես համագործակցության կողմի՝ առավել լայն գործիքակազմի և «կնքվող գործարքում վերջինիս շահեկան դիրքի» մասին վկայող հաջորդ նորմատիվ կանոնը տարրալուծված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 468-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետում: Մասնավորապես, նշված կանոնի համաձայն՝ համագործակցության համաձայնագրի մեջ ի թիվս այլնի նշվում է տեղեկացում այն մասին, որ համագործակցությունից մեղադրյալի հրաժարվելու դեպքում համագործակցության ընթացքում ստացված տվյալները կարող են օգտագործվել որպես ապացույց: Նման պայմաններում չի բացառվում այնպիսի իրավիճակը, երբ ինչ-ինչ պատճառներով համագործակցությունը դադարեցվի և հետագայում մեղադրյալի հայտնած տվյալներն օգտագործվեն նաև հենց իր դեմ: Ուստի, կարծում ենք, որ նշված խնդրին առավել խորքային մոտեցում է պետք ցուցաբերել, և «չհաջողած համագործակցության արդյունքում մեղադրյալի հայտնած տվյալների վավերության կանոնը», դրանց՝ նույնիսկ մեղադրյալի դեմ հետագայում օգտագործելու չբացառումը անհավասար սահմանափակում են համագործակցության «գործարքի կողմի» իրավունքները:

Հետևապես առաջարկում ենք քրեադատավարական օրենքով նախ հստակ սահմանել նշված կանոնը՝ ոչ միայն համագործակցության ռեկվիզիտային տեսքով, այլ նաև սահմանելով մեղադրյալի հայտնած տվյալների օգտագործման հետևյալ երաշխիքը.

«Այն դեպքում, երբ մեղադրյալը հրաժարվում է համագործակցությունից մինչև համագործակցության համաձայնագրով ստանձնած պարտականությունների կատարումը կամ դրանց կատարման ընթացքում, կամ դատախազը որոշմամբ մերժում է դատաքննության հատուկ կարգ կիրառելու մասին միջնորդությամբ վարույթի նյութերը դատարան հանձնելը, ապա համագործակցության առարկա վարույթում մեղադրյալի հայտնած և դատավարական ապացույցների տեսք ստացած տվյալների և դրանք մեղադրական եզրակացությամբ տեղ գտնելու ուժով իրավասու դատարանը (հիմնական գործով) մեղադրական վերդիկտ կայացնելու դեպքում՝ դրանք գնահատելով իրենց պիտանիության և վերաբերելիության համատեքստում, լրացուցիչ դատախուսմանում կողմերի առջև բարձրացնում է ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված առավել խիստ պատժատեսակի համար նախատեսված առավելագույն չափի կամ ժամկետի երեք քառորդը չգերազանցող

պատժի նշանակման նպատակահարմարության հարցը, եթե մեղադրյալի կատարած արարքը ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն չէ: Դատավճռով նշված կանոնի կիրառման ոչ նպատակահարմարության վերաբերյալ եզրահանգման հանգելու դեպքում, ինչպես նաև ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարված լինելու դեպքում, մեղադրյալի կողմից այդպիսի տվյալների հայտնումը գնահատվում է որպես քրեական պատասխանատվությունը կամ պատիժը մեղմացնող հանգամանք»:

**Բանակցությունների արդյունքում համագործակցության համաձայնագրի կնքման հնարավորությունը մեղադրյալի՝ իրեն վերագրվող արարքում մեղքն ընդունելու վերաբերյալ հստակ արտահայտված դիրքորոշման բացակայության պայմաններում**

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 467-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ համագործակցության միջնորդությունը մերժվում է, եթե այն չի համապատասխանում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 465-րդ և 466-րդ հոդվածներով սահմանված պայմաններին, կամ եթե հսկող դատախազը տվյալ համագործակցությունը համարում է ոչ անհրաժեշտ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 468-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ համագործակցության միջնորդությունը բավարարելու դեպքում հսկող դատախազը մեղադրյալի և նրա պաշտպանի մասնակցությամբ կազմում է համագործակցության համաձայնագիր:

Նույն հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ համագործակցության համաձայնագրի մեջ նշվում են մեղադրյալին ներկայացված մեղադրանքի փաստական նկարագրությունը, արարքի իրավական գնահատականը, **ինչպես նաև մեղադրյալի կողմից մեղադրանքը չվիճարկելը:**

Վերը բերված իրավանորմերի համադրված մեկնաբանությունից պարզ է դառնում, որ ի թիվս համագործակցության վարույթի կիրառման և դրա մեկնարկի տրման այլ նախապայմանների, կարևոր նախապայման է նաև մեղադրյալի կողմից իրեն ներկայացված մեղադրանքը չվիճարկելը, որի մասին համապատասխան նշում է կատարվում համագործակցության համաձայնագրում:

Այս առումով, ուշագրավ է, որ օրենսդրորեն նախատեսված է համագործակցության վերաբերյալ ներկայացված միջնորդության մերժման երկու հիմք՝

1. *միջնորդության անհամապատասխանությունը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 465-րդ և 466-րդ հոդվածներով սահմանված պայմաններին,*
2. *հսկող դատախազի կողմից տվյալ համագործակցության ոչ անհրաժեշտության մասին եզրահանգման գաղը:*

Պայմանական թվագրված առաջին կետը վերաբերում է համագործակցության վարույթի կիրառման մեկնարկային և ընթացակարգային պայմաններին, որոնք մեղքի ընդունման մասին որևէ նշում չեն պարունակում:

Մեր ժամանակներից երկրորդ հիմքը տեսականորեն կարող է կիրառվել այն դեպքերում, երբ դատախազը, ուսումնասիրելով միջնորդությունը, գտնում է, որ դրանում բերված փաստարկները խիստ վերացական են, անիրատեսական, նպատակ են հետապնդում ժամանակավորապես «համագործակցման տպավորություն» ստեղծել՝ այս կամ այն մոլուկներից ելնելով, ինչպես նաև հնարավոր ցանկացած այնպիսի դեպքերում, որոնք ողջամտորեն ենթակա են գնահատման:

Նշվածից պարզ է դառնում, որ օրենսդրորեն նախատեսված չէ ուղիղ արգելք՝ մեղադրյալի կողմից մեղքն ընդունելու վերաբերյալ նախապես չհայտնած դիրքորոշման դեպքում համագործակցության միջնորդության՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 465-րդ և 466-րդ հոդվածներով սահմանված պայմաններին համապատասխանության արձանագրման և հսկող դատախազի կողմից տվյալ համագործակցության ոչ անհրաժեշտության մասին եզրահանգման չգալու պայմաններում բավարարել ներկայացված միջնորդությունը՝ բավարարվելով միայն օրենսդրական պահանջի կատարմամբ, այն է՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 468-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի ուժով համաձայնագրում արտացոլել մեղադրյալի կողմից մեղադրանքը չվիճարկելու հանգամանքը, ինչի ներքո վերջինս և իր պաշտպանը կդնեն իրենց ստորագրությունները:

Գտնում ենք, որ առկա իրավակարգավորումներն այդ մասով այնքան էլ ընդունելի չեն. թեև մեղադրյալի կողմից իրեն մեղսագրված արարքում մեղավոր ճանաչելը (մեղադրանքը չվիճարկելը) որպես համագործակցության վարույթի կիրառման նախապայման օրենսդրորեն հստակ նախատեսված չէ, սակայն նշված գաղափարը բխեցվում է համագործակցության համաձայնագրի կնքման օրենսդրական հիմքերից, մասնավորապես, 468-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետից, իսկ մեղադրյալին մեղսագրվող արարքն իր կողմից չվիճարկելու առաջնային քրեադատավարական եղանակն անձի ցուցմունքն է, որի բացակայությունը ուղիղ հակասում է նշված վարույթի տրամաբանությանը, քանի որ համագործակցության վարույթի առանցքում դրված են երեք հիմնական գաղափարներ.

1. *անձին ներկայացված մեղադրանքն ընդունելը,*
2. *համաձայնեցված համագործակցության արդյունքում համաչափ կամ առավել ծանր հանցանքի բացահայտումը,*
3. *նախորդ երկու կետերի առկայության պայմաններում մեղմ պատժի սկնկալիքը:*

Նշված համատեքստում անտրամաբանական է թվում այն իրավիճակը, երբ մեղադրյալն իր ցուցմունքով կհայտնի, որ իրեն ներկայացված մեղադրանքի մասով դիրքորոշում չի հայտնի և ցուցմունք չի տա, սակայն կմիջնորդի համագործակցել իրավապահ մարմինների հետ՝ խոստանալով բացահայտել մեկ այլ հանցանք: Նման իրավիճակում բացակայում է համագործակցության հնարավորության ամենանվազագույն կոմպոնենտը՝ վստահությունը մեղադրյալի խոսքերին և դրանց արժանահավատությունը, իսկ մնացած հանգամանքները թերևս պետք է բխեցվեին դրանից:



Ուստի գտնում ենք, որ անհրաժեշտ է որպես համագործակցության համաձայնագրի կնքման նախապայման՝ նախատեսել մեղադրյալի կողմից մեղքն ընդունելը նախքան համապատասխան միջնորդությամբ հանդես գալը կամ գոնե միջնորդության քննարկման փուլում, իսկ նշված պայմաններում մեղքը չընդունելը նախատեսել որպես միջնորդության մերժման ինքնուրույն հիմք:

### **Համագործակցության առարկան**

Քննարկման է արժանի նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 465-րդ հոդվածի 3-րդ մասը: Նշված մասի համաձայն՝ համագործակցության միջնորդությունը պետք է վերաբերի այլ անձի կողմից ենթադրաբար կատարված և մեղադրյալին վերագրվող հանցանքի ծանրությանը համարժեք կամ ավելի ծանր հանցանքի:

Նշված կանոնից հետևում է, որ, հիպոթետիկ, առանձնապես ծանր հանցագործության վերաբերյալ քրեական վարույթի ընթացքում մեղադրյալի կողմից այլ անձի ենթադրաբար կատարած ծանր կամ միջին ծանրության հանցագործության բացահայտմանն ուղղված՝ համագործակցելու վերաբերյալ առաջարկը չի կարող «քրեադատավարական համագործակցության» առարկա դարձվել: Կարծում ենք, որ առավել ծանր հանցագործությունից «մեկ քայլ ետ ծանրության հանցագործության բացահայտման անթույլատրելիության» սկզբունքը այնքան էլ ընդունելի մոտեցում չէ, և իր կատարած հանցանքից նվազ ծանրության հանցանքի բացահայտմանն ուղղված մեղադրյալի համագործակցության արժեքը չի կարող թերագնահատվել:

Այս համատեքստում ուշադրության է արժանի նաև ՀՀ քրեական օրենսգրքի 77-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դրույթն առ այն, որ ոչ միայն միջին, այլ նաև ոչ մեծ ծանրության հանցագործությունների մասով սահմանում է համագործակցության արդյունքների շրջանակը: Նշվածը կարող է պայմանավորված լինել մի շարք հանգամանքներով. չի բացառվում, որ տեխնիկական բացթողման արդյունքում քրեադատավարական և քրեական օրենսգրքերը չեն համապատասխանեցվել, ինչի արդյունքում ՀՀ քրեական օրենսգրքում ոչ մեծ ծանրության հանցագործություններով փաստացի անհարկի նախատեսվել է համագործակցության հնարավորություն: Մինևույն ժամանակ, հնարավոր է, որ բացթողումը քրեադատավարական օրենքում է առկա և ոչ մեծ ծանրության հանցագործություններով համագործակցության հնարավորությունը դուրս է թողնվել տեխնիկական պատճառներով:

Ամեն դեպքում, կարծում ենք, որ համագործակցության վարույթի՝ որպես մաքուր քրեադատավարական ինստիտուտի կիրառման (պատժի վերաբերյալ հարցերը նկատի չեն առնվում) վերաբերյալ կարգավորումները պետք է տեղ գտնեն բացառապես ընթացակարգային օրենքում, և ոչ թե դրանք ենթադրվեն կամ բխեցվեն նյութական օրենքի վերլուծությունից:

Ստեղծված իրավիճակը իրավակիրառողների համար կարող է առաջացնել չհիմնավորված և վիճելի միջնորդությունների քննության առնելու պարտականություն այն մասով, որ մեղադրյալը կամ վերջինիս պաշտպանը կարող են փորձ կատարել օգտվելու օրենսդրական ոչ հատակ կարգավորումներից՝ մեղադրյալի կողմից կատարված ոչ մեծ ծանրության հանցագործությունների վերաբերյալ քրեական վարույթով ևս ծանրաբեռնեն իրավակիրառողներին՝ համագործակցության վերաբերյալ միջնորդություններ ներկայացնելով, որպիսի պայմաններում առնվազն խիստ վիճելի է մնում դրանց բավարարումը կամ մերժումը:

### **Համագործակցության միջնորդության վերաբերյալ քննիչի կարծիքի իրավական դերը**

Ռոշակի տարակարծությունների տեղիք է տալիս նաև համագործակցության վարույթի կիրառման վերաբերյալ քննիչի կարծիքին վերաբերող իրավակարգավորումները: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 467-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ համագործակցության միջնորդությունը մերժվում է, եթե այն չի համապատասխանում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 465-րդ և 466-րդ հոդվածներով սահմանված պայմաններին, կամ եթե հսկող դատախազը տվյալ համագործակցությունը համարում է ոչ անհրաժեշտ: Նշված կանոնից տրամաբանորեն հետևում է, որ դատախազի՝ համագործակցության անհրաժեշտության բացակայության վերաբերյալ հիմնավորումների ներկայացումը, կամ դատավարական օրենքի 465-րդ, 466-րդ հոդվածներին՝ միջնորդության անհամապատասխանության արձանագրումն ինքնին ի չիք են դարձնում դրա կնքման հնարավորությունը, միաժամանակ արժեզրկում քննիչի՝ «Համագործակցության վերաբերյալ կարծիք» վերտառությամբ փաստաթղթի իմաստը, նախ այն առումով, որ կարծիքն ինքնին իրավաբանորեն չարժևորվող հասկացություն է, երկրորդ՝ օրենսդիրն ըստ էության ելել է «քննիչի կարծիքը գուտ ի գիտություն» ընդունելու տրամաբանությունից, և ոչ ավելին, երրորդ՝ քննիչն ըստ էության չունի իրավական «լծակ»՝ պնդելու իր կարծիքը:

### **«Չփաստաթղթավորված համագործակցությունը»**

Ուշադրության են արժանի նաև այն իրավիճակները, երբ անձը փաստացի ենթարկվում է քրեական հետապնդման, վարույթն իրականացնող մարմնին տալիս է տեղեկություններ, որոնք, ըստ էության, կարող են դառնալ համագործակցության վարույթի առարկա, սակայն փաստացի չի օգտվում այդ հնարավորությունից, քանի որ նման հնարավորության մասին տեղեկացված չէ: Նշված շիսկը հատկապես առկա է այն իրավիճակներում, երբ անձը չի ձերբակալվել հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով և հետագայում ազատ արձակվել ձերբակալումից՝ առանց քրեական հետա-

պնդման հարուցման, այլ վերջինիս վերաբերյալ առկա է կասկածանք<sup>8</sup>, նա ինքնակամ ներկայացել է կամ հարկադրաբար ներկայացվել է վարույթն իրականացնող մարմնին, միաժամանակ դեռևս առկա չեն քրեական հետապնդման իրականացման և հարուցման հիմքեր<sup>9</sup>:

Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածով (հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով) սահմանված կարգով ձերբակալվածին ազատությունից փաստացի զրկելու պահից անհապաղ, բայց ոչ ուշ, քան 6 ժամվա ընթացքում պետք է հանձնվի նրան ձերբակալելու կամ ազատ արձակելու վերաբերյալ որոշում, **ինչպես նաև մեղադրյալի՝ սույն օրենսգրքով սահմանված իրավունքների և պարտականությունների ցանկը**: Ձերբակալման որոշման մեջ նշվում են այն կազմելու տարին, ամիսը, օրը, ժամը, րոպեն և վայրը, ձերբակալվածի տվյալները, նրան վերագրվող արարքի փաստական հանգամանքները, ձերբակալման հիմքը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի համաձայն՝ մեղադրյալը սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի հսկող դատախազին միջնորդելու՝ կիրառելու համագործակցության վարույթ:

Այսինքն՝ անձի փաստացի արգելանքի վերցվելու դեպքում, անկախ այդ փուլում քրեական հետապնդման հարուցման ընթացակարգերին գնալու կամ չգնալու հանգամանքներից, օրենսդիրն իրավակիրառողներին պարտավորեցրել է առնվազն այդ փուլում անձին տրամադրել մեղադրյալի իրավունքների և պարտականությունների ցանկը՝ այդքանով վերջինիս տեղեկացնելով, որ անգամ այդ փուլում վերջինիս ազատ արձակումը (ձերբակալման որոշման կայացման դեպքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 189-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով քննիչը պետք է առաջնորդվի քրեական հետապնդման գնալու օրենսդրական իմպերատիվ կարգավորումներով՝ այդ մասին հսկող դատախազին ներկայացնելով միջնորդություն) և քրեական հետապնդման հարուցման ընթացակարգերին չդիմելը հետագայում չի բացառում վերջինիս՝ մեղադրյալի կարգավիճակում հայտնվելը: Ուստի, այդ փուլում անձը, մեղադրյալի իրավունքների և պարտականությունների ցանկին ծանոթանալով, հնարավորություն է ստանում որոշելու,

<sup>8</sup> Դեվեերն ընդդեմ Բելգիայի (Deweere v. Belgium) գործով վճիռ, (Application no. 6903/75), Ստրասբուրգ, 1980 թ., Էկլեն ընդդեմ Գերմանիայի (Eckle v. Germany) գործով վճիռ, (Application no. 8130/78), Ստրասբուրգ, 1983 թ.:

<sup>9</sup> Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի հիման վրա «քրեական մեղադրանք» հասկացությունը պետք է հասկացվի ոչ թե ձևական (փաստաթղթային), այլ բովանդակային (գործնական) իմաստով (Դեվեերն ընդդեմ Բելգիայի (Deweere v. Belgium) գործով վճիռ): Այսինքն՝ անձի նկատմամբ «մեղադրանքի» առկայության մասին կարող է վկայել նաև այնպիսի միջոցներ ձեռնարկելը, որոնք ենթադրում են հանցագործության մեջ կասկածանքի առկայություն, ինչպես նաև էականորեն ներգործում են կասկածվող անձի դրության վրա (Էկլեն ընդդեմ Գերմանիայի (Eckle v. Germany) գործով վճիռ):

ճիշտ տնօրինելու և օգտագործելու իր իրազեկության սահմաններում առկա տեղեկատվությունը՝ այդքանով հնարավորություն ունենալով «տակտիկապես ճիշտ» դատավարական՝ մեղադրյալի կարգավիճակում օգտագործելու իր իրազեկության և հնարավոր համագործակցության առարկա տեղեկատվությունը:

Մնացած բոլոր դեպքերում, հնարավոր մեղադրման ենթակա անձին պետք է իրազեկել ոչ միայն նշված իրավունքի, այլ նաև մեղադրյալի մյուս բոլոր իրավունքների և պարտականությունների մասին, ինչը ոչ միայն կերաշխավորի նշված ինստիտուտի կենսագործման հնարավորությունը, այլ նաև վկայի կարգավիճակով պայմանավորված ցուցմունք տալու պարտականությունից ելնելով՝ ցուցմունքների կորզման բացառումը կամ այլ ապացույցների ձեռքբերումը, քանի որ այդպիսի եղանակներով ստացված ապացույցներն իրենց հերթին կարող են ճանաչվել օրենքի էական խախտմամբ ձեռք բերված և այդպիսով՝ անթույլատրելի (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետ):

### **Համագործակցության միջնորդությունը**

Քննարկման է արժանի նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 466-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջն առ այն, որ համագործակցության միջնորդությունը մեղադրյալի կամ նրա պաշտպանի կողմից հսկող դատախազին հանձնվում է քննիչի միջոցով:

Չեն կարող բացառվել այնպիսի իրավիճակները, երբ պաշտպանական կողմի միջնորդությունն ուղղվի անմիջապես դատախազին, իսկ դրա քննության հաստատումը հանգեցնի մեղադրյալի՝ իր միջնորդությունից նահանջելուն, և այդպիսով այլ անձի կողմից կատարված ենթադրյալ հանցագործության հնարավոր բացահայտման անհնարինությունն է: Ի վերջո, որքան համագործակցությունը բխում է մեղադրյալի շահերից՝ ի հաշիվ սպասվող մեղմացուցիչ պատժի և պատասխանատվության, այնքան էլ բխում է վարույթի հանրային մասնակիցների, ի դեմս պետության, հանրային շահից:

Հետևապես նման իրավիճակներում դատախազը պետք է հնարավորություն ունենա լուծել իրեն ներկայացված միջնորդությունը՝ դրա լուծման համար քննիչից անհապաղ պահանջելով և ստանալով քրեական վարույթի նյութերը: Հակառակ դեպքում, առկա օրենսդրական կարգավորումների պայմաններում դատախազը պետք է այն հասցեագրի քննիչին, ապա քննիչը երեք օրվա ընթացքում դրա բավարարման կամ մերժման վերաբերյալ իր գրավոր կարծիքի հետ միասին վերահասցեագրի դատախազին, ինչի արդյունքում կարող են առաջ գալ վերը նկարագրված հետևանքները:

### **Եզրակացություն**

Ամփոփելով՝ կարող ենք եզրահանգել, որ համագործակցության վարույթը, հայրենական քրեադատավարական համակարգում հանդիսանալով առավելապես նոր ինստիտուտ, կարող է առանցքային տեղ զբաղեցնել պարզեցված մյուս վարույթների շարքում, մինչույն ժամանակ, դեռևս ունի զարգացման ճանապարհ և գործնական դաշտում կիրառելիության հիմնախնդիրներ, որոնց վերհանումը և համապատասխան լուծումների առաջարկներով հանդես գալը խիստ արդիական են, քանի որ ինստիտուտի պատշաճ գործադրումը բխում է ոչ միայն վարույթի մասնավոր մասնակցի՝ մեղադրյալի շահերից, այլ նաև պետության անունից հանդես եկող վարույթի հանրային մասնակիցների, այդպիսով հասարակության և պետության շահերից՝ ի նպաստ այլ հանցագործությունների բացահայտման:

Վերը նշվածի համատեքստում համագործակցության սահմանների, մեղադրյալի միջնորդության, հսկող դատախազի կողմից դրա վերաբերյալ կայացվող որոշման, քննիչի կարծիքի, «չհաջողված» համագործակցության, միջնորդությունն անմիջապես դատախազին ներկայացնելու, մեղադրյալի՝ իրեն վերագրվող արարքում մեղքն ընդունելու վերաբերյալ հստակ արտահայտված դիրքորոշման բացակայության պայմաններում բանակցությունների արդյունքում համագործակցության համաձայնագրի կնքման հնարավորության, ինչպես նաև փաստաթղթային առումով մեղադրյալ չհանդիսացող անձի կողմից նախաքննական մարմնին հնարավոր հետագա համագործակցության առարկայի արժեք ունեցող տեղեկատվության հայտնման վերաբերյալ հարցերի քննարկումը, դրանց վերաբերյալ աշխատանքում վկայակոչված նկատառումները կարող են էլ ավելի լավարկել գործող իրավակարգավորումները՝ ի նպաստ վարույթի մասնավոր և հանրային մասնակիցների:

**Գրականության ցանկ (reference list, список литературы)**

1. Ղուկասյան Հ., Մելքոնյան Դ., Տարբերակված դատավարության ձևը և դրա առանձնահատկությունները, Երևան, «Պետություն և իրավունք», № 1, 2007 թ.:  
Ghukasyan H., Melkonian D., Differentiated procedural form and its features” Yerevan, “State and law”, № 1, 2007.
2. Խաչատուրյան Դ., Համագործակցության վարույթ. իրավափիլիսոփայական հիմքերը, կիրառման շրջանակներն ու կարգը, արդյունավետության երաշխիքները և զարգացման հեռանկարները, Երևան, «Պետություն և իրավունք», № 2 (64), 2014 թ.:  
Khachaturyan D., “Cooperation agreements: Philosophical and criminological foundations, scope and procedure of application, safeguards of efficiency and ways of development”, Yerevan, “State and law”, № 2 (64), 2014.
3. Быков В. М., Новый закон о сделке обвиняемого с правосудием: критические заметки. Российский судья. 2009. N 9.  
Bikov V. M., New law on the defendant’s deal with justice: Critical notes. Russian judge. 2009. N 9.
4. Դեվեերն ընդդեմ Բելգիայի գործով վճիռ, գանգատ 6903/75, Ստրասբուրգ, 1980 թ., Էկլեն ընդդեմ Գերմանիայի գործով վճիռ, գանգատ 8130/78, Ստրասբուրգ, 1983 թ.:  
Deweere v. Belgium, Application no. 6903/75, Strasbourg, 1980, Eckle v. Germany, Application no. 8130/78, Strasbourg, 1983.
5. <https://www.americanbar.org/news/abanews/aba-news-archives/2023/02/plea-bargain-task-force/> (մուտք 29.01.2024թ.) (access 29.01.2024)
6. <https://bja.ojp.gov/sites/g/files/xyckuh186/files/media/document/pleabargainingresearchsummary.pdf> (մուտք 29.01.2024թ.) (access 29.01.2024)

**Robert Mheryan**

*Prosecutor of the Department for Cases of Crimes against the  
Fundamentals of the Constitutional Order, State and Public Security of the  
Prosecutor General's Office of the Republic of Armenia,  
Ph.D. Degree Applicant at the Department of Criminal Procedure and  
Criminology of Law Faculty of Yerevan State University*

## **CONSIDERATIONS ON THE NATURE OF THE COOPERATION PROCEEDINGS AND THE LEGISLATIVE REGULATION OF SEPARATE RELATED ISSUES<sup>1</sup>**

### **Abstract**

This article explores certain fundamental issues concerning cooperation proceedings as simplified form of judicial procedure, introduces its definition and terminology used therein.

The institution above has entered into the field of application in the domestic legal system relatively recently, which means that a number of problems have already arisen and will arise in practical work, the prior discussion of a part of which can certainly contribute to the search and application of their most accurate solutions which also demonstrates the relevance of this study. The problem of this article is to highlight the problems that may arise in the application of the cooperation proceedings, to discuss their legal regulations, to highlight the problematic and effective aspects, and to propose certain solutions as the goal of the work.

Boundaries of cooperation, motion of the accused, the decision made by the supervising prosecutor on the motion, issues regarding the opinion of the investigator, “unsuccessful” cooperation, possibility of signing a cooperation agreement as a result of negotiations in the absence of a clearly expressed position of the accused regarding the admission of guilt in the act attributed to him, submitting the motion directly to the prosecutor have been discussed under the article and proposals have been presented. The situations when a person, not being formally accused, essentially co-operates with the preliminary investigation bodies without being informed that the information under his or her possession could become the subject of cooperation proceedings are also discussed.

The considerations made in the article on the indicated issues can further improve the existing legal regulations to the benefit of private and public participants in the proceedings.

**Keywords:** cooperation proceedings; agreement; prosecutor; accused; transaction; subject of the cooperation.

---

<sup>1</sup> The article was presented on 31.01.2024 and was reviewed on 17.05.2024.

**Роберт Мгерян**

*Прокурор управления по преступлениям против основ конституционного строя, государства и общественной безопасности Генеральной прокуратуры Республики Армения, соискатель кафедры уголовного судопроизводства и криминалистики юридического факультета Ереванского государственного университета*

## **СООБРАЖЕНИЯ О СУЩНОСТИ ПРОЦЕДУР СОТРУДНИЧЕСТВА И ЗАКОНОДАТЕЛЬНОГО РЕГУЛИРОВАНИЯ КАСАТЕЛЬНО ОТДЕЛЬНЫХ ВОПРОСОВ<sup>1</sup>**

### **Абстракт**

В настоящей работе рассматриваются некоторые вопросы по делам о сотрудничестве, как упрощенной процессуальной формы, дается определение и применяемая в нем терминология.

Указанный институт внутригосударственной правовой системы сравнительно недавно вступил в область практического применения, тем самым свидетельствуя о вероятности наличия и возникновения в будущем ряда проблем, интенсивное обсуждение которых, несомненно, поспособствуют поиску наиболее точных решений и реализации их на практике, тем самым обуславливая актуальность избранной темы исследования. Основной задачей настоящей работы является анализ и выявление всевозможных проблем, свойственных процедуре производства по сотрудничеству, обсуждение вопросов правового регулирования, а также определение положительных и отрицательных аспектов исследуемой задачи и как следствие целью исследования является – определение и формирование предложений, направленных на разрешение и урегулирование выше обозначенных задач.

В качестве предмета обсуждения выдвинуты вопросы о границах сотрудничества, ходатайствах обвиняемого, решения, принимаемые по предмету ведения вышестоящим прокурором, мнение следователя о «неудавшемся/неудачном» сотрудничестве, ходатайствах, непосредственно представленных прокурору, возможности заключения соглашения о сотрудничестве в результате переговоров при отсутствии четко выраженной позиции о признании обвиняемым вины во вменяемом ему деянии, – по этим вопросам внесены предложения. Обсуждению

---

<sup>1</sup> Статья была представлена 31.01.2024 и прошла рецензирование 17.05.2024.



подверглись в том числе ситуации, когда лицо, не обладающее процессуальным статусом обвиняемого в документальном смысле, по сути, сотрудничает с органами предварительного следствия, не будучи информированным о том, что находящаяся в его ведении информация могла стать предметом дела по сотрудничеству.

Резюмируя вышеизложенное, доводы по предмету настоящего исследования, определенные в настоящей работе, могут способствовать дальнейшему усовершенствованию действующего правового регулирования в интересах лиц участвующих в уголовном процессе – в лице частных и государственных участников судопроизводства.

**Ключевые слова:** дело сотрудничества; соглашение; прокурор; обвиняемый; сделка; предмет сотрудничества.